

2 Տիմոթեոս 2:8 (2 Timothy 2:8)

«Յիշէ՛ Տեր Յիսուս Քրիստոսը»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 08.18.02

Աշխարհի մը մէջ կապրինք որ լեցուն է նեղութիւնով, աշխարհ մը որ չունի շիտակ եւ սխալ. իմաստ չկայ, հապա՛ յուսալգում: Շատ բաներ մեր սիրտը կը բեռնաւորեն այսօր ինչպէս՝ տնտեսութիւնը, անորոշ ապագան, ահաբեկչութիւնը կամ ընտանեկան հարցերը, փոքրիկներու առեւանգումը, եւ այլն:

Կարդանք 2 Տիմոթեոս 2:8ը - Պօղոս այս նամակը գրեց Տիմէթեոսի, որ հովին էր հեթանոս ֆաղափի մը ուր՝ կեանքի իսկական արժէքը փոխուած էր, մարդոց մտայնութիւնը շուարած վիճակի մէջ էր եւ անյոյս էին:

Ուրեմն կարդանք 2 Տիմոթեոս 2:8ը *«Միտի՛ր բեր Դաւիթին ցեղէն եղող Յիսուս Քրիստոսը՝ մեռելներէն յարութիւն առած, իմ ֆարոգած աւետարանիս համաձայն.»* Ինչ որ ալ ըլլայ մեր պարագան *«յիշենք Տէր Յիսուս Քրիստոսը»*

Առաջին - Պօղոս կը գրէ: Յիշէ՛ Յիսուս Քրիստոսը, յարութիւն առած՝ մեռելներէն:

Երբ Յիսուս խաչուեցաւ, իր թշնամիները ջանք թափեցին որ Յիսուս մեռնի լիովին, նաեւ մեռած մնայ գերեզմանին մէջ: Բայց երբ Կիրակի առաւօտ Մարիամ, Յովհաննէս եւ Պետրոս հասան գերեզման գայն պարապ գտան: Յետոյ հարիւրաւոր անձիք տեսան Յիսուսը՝ ողջ: Նոյնիսկ իր թշնամիները ընդունեցին որ Յիսուս ողջ էր: Յիսուսի յարութիւնը իրականութիւն մըն է:

Ուրեմն մեր հաւատքը պարապ չէ երբ կը հաւատանք Յիսուսի իշխանութեան նաեւ Աստուածային զօրութեան վրայ: Երբ մենք կը փորձուինք վախնալու, կամ կը յուսահատինք, կամ կը հանդիպինք դժուարութիւններու եւ անորոշութեանց, յիշենք մեր յարուցեալ Տէրը, որ կորոշէ ժամանակը Իր զօրութեան եւ իշխանութեան համաձայն, որպէսզի վերջ դնէ այս աշխարհի խելագարութիւնը եւ անարդարութիւնը: Երբ մենք Իրեն վստահինք, մեր կեանքի բոլոր պարագաներուն մէջ, Ան ունի իշխանութիւն եւ զօրութիւն յաղթական ըլլալու:

Երկրորդ - Պօղոս առաքեալ կը գրէ, յիշէ՛ Տէր Յիսուս Քրիստոս՝ Դաւիթի սերունդէն:

Յիսուսէ ետք կրնանք ըսել թէ Դաւիթի կեանքը լաւ գիտցուած է ան որպէս հովիւր, որպէս մեղաւորը, անբաղդ հայրը, պատերազմողը, եւ վերջապէս Դաւիթ Թագաւորը: Աստուծոյ ներկայութիւնը միշտ Դաւիթի հետ էր: Յիսուս որպէս մարդ ծնաւ Դաւիթի սերունդէն՝ ապրելու, չարչարուելու եւ մեռնելու մեզի համար:

Եբրայեցիս 12:3 կըսէ «Միտք բերէ՛ք զանհկա, Յիսուս, որ այսպէս համբերէ մեղաւորներուն Իրեն դէմ հակառակ խօսելուն, որ չըլլա՛յ թէ ձեր անձովը յոգնի՛ք ու թուլնա՛ք:»

Յիշենք Եսայեայ 9:6 որ կը ներկայացնէ Յիսուս՝ որպէս Սփանջելի Խորհրդակից, Հօգօր Աստուած, որ կրնայ մեր բոլոր հոգերը վերցնել, կրնայ մեր սրտերուն խօսիլ եւ կրնայ մեզ նորոգել: Ան մեզի հետ կը փալէ: Յիսուս, ունի երկնային իմաստութիւն, եւ ամէն կերպով կրնայ օգնել մեզի ինչ որ ալ ըլլայ մեր պարագան:

Ուրեմն երբ նեղութեան մէջ ես, յիշէ Յիսուս Քրիստոս, Դաւիթի սերունդէն եկած եւ վստահէ Իրեն, տուր Իրեն փու բեռդ:

Երրորդ - Պօղոս կը գրէ - յիշէ Տէր Յիսուս Քրիստոս իմ աւետարանիս համաձայն:

Սօղոս որ կը հալածէր եկեղեցին, եղաւ Պօղոս առաքեալ՝ աւետարանիչ: Պօղոսի կեանքը փոփոխեցաւ քանի որ անձամբ յարուցեալ Յիսուսի հանդիպեցաւ եւ ընդունեց զինք որպէս իր Փրկիչը: Տիմոթէոսի կը գրէ Հոովմի բանտէն, ուր պիտի մեռնէր: «Յիշէ Յիսուս Քրիստոս՝. այս է իմ Աւետարանս. իմ վկայութիւնս, Ան կապրի!!»

Աշակերտները տեսան Յիսուսի մահը: Լման անյոյս էին. բայց բան մը պատահեցաւ: Անոնք անձամբ տեսան յարուցեալ Յիսուսը: Իրենց կեանքը յեղափոխուած էր եւ սկսան Աւետարանը փարոգել՝ այսինքն յարուցեալ Յիսուս Քրիստոսը. նոյնիսկ երբ մահը իրենց առջեւ էր: Յիսուսի յարութենէն իվեր պիլիոնաւոր մարդ, կին եւ մանուկներ փոխուած են: Յիսուս իմ կեանքս ալ փոխած է:

Այս առաւօտ հրաւեր մը ունինք, ոչ միայն յիշել պատմական իրականութիւն մը, հապա հրաւեր մը՝ զգալու յարուցեալ Յիսուսի զօրութիւնը մեր կեանքին մէջ: Ինչ որ է՝ քու պարագադ, յիշէ յարուցեալ Յիսուս Քրիստոսը, Դաւիթի սերունդէն, շատերու կողմէ վկայուած, որոնց կեանքերը յեղափոխուած են Յիսուսի կողմէն:

### Աղօթք:

Սիրելի Երկնաւոր Հայր, շնորհակալ ենք որ Յիսուսը դրկեցիր որպէսզի քու փրկութիւնդ եւ յաղթանակդ զգանք մեր կեանքին մէջ: Երբ կը փորձուինք յուսահատելու օգնէ՛ մեզի որ մեզի վստահինք, մեր հոգերը մեզի տալու եւ լման մեզի նուիրելու մեր կեանքը: Հիմա որ մեզի կը վստահինք, փոխ՛է մեզ, բժշկ՛է մեզ, զօրացուր մեզ, եւ օգնէ որ մեզ վկայենք ուրիշներու: Յիսուսի անունով՝ Ամէն: